

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԸ

Ժամանակակից պարսկական առաջադեմ պոեզիան ծնվել ու զարգացել է իր ժամանակի սոցիալ-պատմական այնպիսի իրադարձությունների ազդեցության ներքո, որոնք աչքի են ընկնում ներքին ոեակցիայի և իմպերիալիստական զաղութարարների դեմ ուղղված պարսիկ ժողովրդի ազատագրական պայքարով: Հենց այդ պատճառով էլ, սկզբից ևեթ պարսկական նորերով պոեզիան սաղմնավորեց իր մեջ նորի համար պայքարողի առանձնահատկությունը և սկզբունքային այդ ելակետը առաջին հերթին արմատապես վերափոխեց նրան, անջատելով դասական պոեզիային յուրահատուկ՝ ձևի և բովանդակության քարացած տրադիցիաներից:

Պարսկական պոեզիայի այս նոր առանձնահատկությունը պարզորոշ նկատվում է նրա առաջացման դեռ վաղ շրջանից (XIX դարի երկրորդ կես), երբ պարսիկ լուսավորիչները (Միրզա Հոսեյն-խան Սեփահալար, Միրզա Մալքոմ-խան¹, Ջեյն-օլ-Արեդին, Քալեբով և ուրիշներ) սկսեցին համոզորեն պայքարել իրանի ֆեոդալական հետամնաց սովորությունների ու բարքերի դեմ, ցույց տալով պարսիկ ժողովրդին զարգացած երկրների քաղաքակրթությունից օգտվելու անհրաժեշտությունը:

Իրանում ծայր առան հասարակական-քաղաքական նոր հոսանքներ, որոնք նպաստավոր նախապայմաններ ստեղծեցին 1905—11 թթ. իրանական հեղափոխության համար:

Սոցիալական հակասությունների սրման և իմպերիալիստական տերությունների վարած ստրկացնող քաղաքականության արդյունքը եղավ 1905—11 թթ. իրանական բուրժուական հեղափոխությունը, որը նոր էտապ հանդիսացավ պարսկական զրականության զարգացման համար:

Իրանական բուրժուական հեղափոխական շարժման համար կարևոր դեր խաղաց նաև 1905 թ. ռուսական առաջին հեղափոխությունը: Երկրում ծայր առած ցույցերում բացահայտ կերպով արտահայտվում էին հակաֆեոդալական և հակաիմպերիալիստական տրամալորություններ: Գույցերի մասնակիցները պահանջում էին հաստատել բուրժուա-դեմոկրատական կարգեր: Ռուս բոլշևիկները ամեն կերպ պաշտպանում էին պարսիկ ժողովրդի շահերը, անմիջապես օգնություն ցույց տալով նրան: Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս 1905—11 թթ. իրանական հեղափոխությանը: «Ռևոլյուցիոն այնպիսի մի շարժում,—գրում է Վ. Ի. Լենինը 1906 թվականի Քավրիզի ապստամբության մասին,— որը կարողանում է ռազմական հակահարված տալ ռեստավրացիայի փորձերին, որը հարկադրում է այդ փորձերի հերոսներին դիմելու այլազգիների օգնությանը,— չի կարող ոչնչացվել, և պարսկական ռեակցիայի ամենալիակատար հաղթանակը նման պայմաններում ժողովրդական նոր հուլմունքների նախադուռը կլինի միայն»²:

1905—11 թթ. հեղափոխական շարժումները պարսիկ հասարակության լայն մասսաներին շփման մեջ դրեց երկրի քաղաքական կյանքի հետ և հարստացրեց ներքին և արտաքին շահագործողների դեմ նրա պայքարի փորձը:

Ժողովրդական մասսաների քաղաքական աշխուժությունը բացահայտվեց ոչ միայն ցույցերի և գործադուլների մեջ, այլև օրըստօրե զարգացող դեմոկրատական մամուլի «Սուրե Էսրաֆիլ», «Հար-օլ-Մաթին», «Նասիմե շոմայ» թերթերի էջերում, որոնք իր ժամանակի համար հանդիսանում էին նոր դեմոկրատական պոեզիայի տարածման կարևոր և, կարելի է ասել, միակ միջոցը:

Հեղափոխության ժամանակ զգալիորեն փոխվում է զրականության մեջ տեղ գտած թեման, գլխավորապես արտացոլելով իր մեջ սոցիալական կյանքի կարևոր հարցեր:

¹ Մալքոմ-խան (1833—1908) հայ լուսավորիչ-դեմոկրատ: Նա մեծ ծառայություն է մատուցել պարսիկ ժողովրդին և տարիներ շարունակ զբաղեցրել է պետական կարևոր և պատասխանատու պաշտոններ նասերեղին շահի թագավորության օրոք:

² Վ. Ի. Լենին, Դյուրավառ նյութը համաշխարհային քաղաքականության մեջ, Երկեր հատ. 15, 4-րդ հրատ., էջ 216:

Բացի դա, սա մի ժամանակաշրջան էր, երբ փոխադարձ կապ ստեղծվեց ռուս-պարսկական դրականության միջև և թարգմանությունների միջոցով ռուս առաջավոր գրականությունն ու հասարակական միտքը ներթափանցեց Իրանը:

Քաղաքական իրադարձություններով նման մի ժամանակաշրջանում, գրական ասպարեզ իջան ազատամիտ երիտասարդ բանաստեղծներ (Աբուլղասեմ Լահութի, Մալեք-օշ-Շոարայե Բահար, Արեֆ Դազվինի և ուրիշներ):

Մինչև 20-ական թվականները պարսիկ ազատամիտ պոետների ստեղծագործությունները թեև հեռու էին իրականությունը համակողմանիորեն բացահայտելու հնարավորությունից, սակայն իրենց հարցադրման կարևորությամբ մեծ հետաքրքրություն էին առաջացնում ընթերցասեր հասարակության մեջ: Նրանց շափածո հակիրճ խոսքը հնչում էր որպես տիրակալների դեմ ուղղված ահեղ նախազգուշական կոչ:

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին ցարական Ռուսաստանը և իմպերիալիստական Անգլիան 1907 թվականին կնքած պայմանագրի հիման վրա շատ ավելի են զորեղացնում իրենց զաղութարարական ճնշումը Իրանի վրա:

Հեղափոխության բովից անցած պարսիկ ժողովուրդը ավելի հստակ է սկսում ճանաչել հայրենիքի ներքին և արտաքին թշնամիներին: Գնալով սրվում են դասակարգային հակասությունները, որոնք վաղ թե ուշ նոր քաղաքական պայթյուն պետք է առաջ բերեին Իրանում:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը նոր դարագլուխ է բաց անում մարդկության բավադարյան պատմության մեջ: Նրա հեղափոխական հզոր ձայնը տարածվում են Ռուսաստանի սահմաններից դուրս և արձագանք գտնում աշխարհի բոլոր ճնշված ու շահագործվող ժողովուրդների մեջ: Իրանի շիկացած երկնակամարի վրա նույնպես նա շեփորում է իր ազատարար կոչը, ոգեշնչելով պարսիկ աշխատավորությանը կերտելու իր համար անկախ քաղաքական կյանք:

«Հոկտեմբերյան հեղափոխությունը,—գրում է ղոկտոր Ռադմանեշը,—մեր երկիրն ազատեց անկախության ու ինքնավարության ոչնչացման վտանգից: Փրկեց ցարական իմպերիալիզմի լծից և անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեց մեր ժողովրդի համար պայքարելու տնտեսական ու քաղաքական անկախ կյանքի համար»⁴:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երեք տարվա ընթացքում (1919—22 թթ.), Իրանի հյուսիսային սահմաններում՝ Ատրպատական, Գիլան, Մազանդարան, խորասան, փոթորկում էին գյուղացիության ու աշխատավորների ապստամբությունները ուղղված Իրանի ռեակցիոն ուժերի և անգլիական իմպերիալիզմի ոտնձգությունների դեմ:

Ժողովրդի հետ մեկտեղ պայքարի են դուրս գալիս առաջադեմ նոր պոետներ՝ Իրաշը, Միրզան, Մ. Էշդին, Ֆ. Յազդին, որոնք իրենց առջև տեսնում են սոցիալական նոր հարաբերություններ: Այդ հարաբերությունները պարսկական գրականությանն առաջադրեցին նոր պրոբլեմներ և գրողներին կանգնեցրին նոր հարցերի լուծման անխուսափելի անհրաժեշտության առաջ:

Ժողովրդի նոր զարթոնքը թարմություն ներշնչեց պարսիկ հայրենասեր պոետների ստեղծագործություններին: 1918—1925 թթ. Իրանում հրատարակվող պարսկական մամուլի էջերում տպագրվեցին բազմաթիվ հոդվածներ, բանաստեղծություններ ու պոեմներ Հոկտեմբերյան հեղափոխության մասին: Այնպիսի աչքի ընկնող ստեղծագործություններ, ինչպիսիք են Վ. Դաստգարդիի «Գիրք սովի մասին», Ա. Լահութիի «Լենինը կենդանի է», «Կրեմլ», Աշրաֆ Գիլանիի «Գահճեն կեց Նիկոլայը թող կարդա» և այլն մեծ տարածում գտան պարսիկ ընթերցողների մեջ:

Պետք է նշել, որ XIX դարի վերջում պարսկական բանաստեղծության մեջ արտահայտված սոցիալական բողոքի, հայրենասիրության մոտիվները իրենց զարգացման վերելքն են ապրում XX դարի 20-ական թվականների շափածոյի պարսիկ վարպետների մոտ: Դեմոկրատական գաղա-

3 Այս հարցում մեծ և կարևոր դեր է կատարել Ջալիլ Մոհամմադ Դուլիի խմբագրությամբ հրատարակվող «Մուլա-Նասրեդդին» հանդեսը, որը համառոտեց պայքարում էր Արևելքի ժողովուրդների ազատագրման համար: Այն հրատարակվում էր Թիֆլիսում 1906 թվականի ապրիլի 7-ից:

4 دکتر رادمنش—تأثیر انقلاب اکتبر در ایران، سال ۱۳۳۸، ص ۴
Իր. Ռադմանեշ, Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությունը Իրանում, 1938, էջ 4:

5 «Տե՛ս մանրամասն» Б. Гусейнов, Поэты Ирана о Советском Союзе, М., 1965.

փարեների տեր այս պոետներն արդեն այս կամ այն չափով ունեին իրենց հստակ քաղաքական, բարոյական սկզբունքներն ու համոզմունքները:

Ձպետը է մոռանալ նաև մի կարևոր հանգամանք, որ պարսկական առաջադեմ նոր պոեզիայի ձևավորման ընթացքում զգալի դեր է խաղում նաև ուսու դեմոկրատ և սովետական շրջանի գրականության ազդեցությունը, որը սկսած 20-ական թվականներից լայն տարածում է գտնում Իրանում, թարգմանչական ու մշակութային այլ կապերի շնորհիվ⁶:

20-ական թվականների պարսկական առաջադեմ պոեզիայի մեջ իշխող գաղափարը, նրա հիմնական առաջ մղիչ ուժը՝ ազգային անկախության ու սոցիալական ախտերի վերացման գաղափարն է:

Պոետ Արեֆ Ղազվինու⁷, ինչպես և նրա ժամանակակիցներից շատերի համար հայրենիքի հետ կապված երկու հիմնական հարցերը՝ նրա անշված լինելը արտաքին տիրապետողներից և կաշկանդված լինելը սեփական բռնակալներից այսինքն՝ ազգային և սոցիալական մոտիվները անջատված չեն մնում միմյանցից:

Կախաղանն է սպասում, նուրս ով զգաստ, արբուն է մնում մեր այս Խանում:

Կմնան արբուն ու ձեռք-ձեռքի տված. կփշեեն դաժան օրենքն Խանում:

Իր ժողովրդի պայքարի յուրաքանչյուր հաջողությունը անվերապ է մնում պոետի տեսադաշտից: Նա անկարող էր լուռ հետևելու Ատրպատականի ապստամբության դեպքերին և նրան անմիջապես հաջորդող խորասան նահանգի ազգային-ազատագրական շարժումներին: Ոգևորված իր ժողովրդի նոր զարթոնքով բանաստեղծը մարտական շուն է տալիս իր խոսքին:

Խանն է զոհվել դավաճանների ձեռքով Բահաբ:

Այսօր պետք ունենա գործի բանակի. մարտիկների Բաթ:

Հայրենիքի ազատագրման միտքը, զեղարվեստական հմայք առած բանաստեղծի քնարական խոհերի առատության հետ թափանցում է ժողովրդի սիրտը: Ձուր չէ, որ Արեֆը պարսկական նոր գրականության մեջ ճանաչված է որպես ժամանակաշրջանի ազգային պոետ:

Ներքին և արտաքին թշնամիների կողմից կեղեքված իր հայրենիքի ողբերգական վիճակը բանաստեղծի համար պատմություն չէր, այլ՝ աշխի առաջ կատարվող իրողություն: Ազգի ճակատագիրը իր սեփականը համարող պոետը չէր կարող անվերաբերմունք մնալ իրադարձություններին և չասել իր խոսքը:

Դիմելով հայրենիքի ազատության համար մարտնչող մարտիկներին, Արեֆն ասում է.

Թե մի բուռ հսկ էլ մնա վախճանից, զլիսիդ ման ածիր. ու քն պետք լինի կուրծքիդ դեմ արա բշտամու բրին⁸:

Իր բանաստեղծությունների մի մասը Արեֆը նվիրաբերել է ազգային-ազատագրական շարժումների ղեկավարներ Սաթթար-խանին, Բադեր-խանին («Աշնան քամին»), Մոհամմադ Թադի-խանին («Սգա, լաց եղիր», «Ազատության պատգամ» և այլն):

Արեֆ Ղազվինին իր երկրի ազատագրման մտքի միայն թարգմանը չի եղել: Դրա հետ մեկտեղ, նրա ստեղծագործությունների մեջ քիչ չեն սոցիալական ախտերի, բարոյական ալլասերումների նկատմամբ արտահայտած բողոքն ու անկաշառ քննադատությունը: Պոետի համար կարևոր տեղ էին գրավում նաև ժողովրդի լուսավորության ու կանանց իրավահավասարության խնդիրները, որոնց նա հասարակության զարգացման ու կատարելագործման համար անհրաժեշտ գործոններ է համարել և հաճախ լիրիկական զեղումներով ստեղծած իր երգերում անդրադարձել է իր ժամանակի սոցիալական աշխի ընկնող այդ կարևոր խնդիրներին:

1920 թ. գրած զազելներից մեկում Արեֆը Իրանի կանանց կոչ է անում վերջնականապես ազատվել յադրայից ու դուրս գալ մուսուլմանական կրոնի կապանքներից:

⁶ Տե՛ս А. З. Розенфельд, А. С. Пушкин в персидских переводах, Вестник ЛГУ, 1949, № 6; Горький и современная персидская литература, Вестник ЛГУ, 1951, № 8; М. С. Иванов, Новейшая история Ирана, М., 1965, стр. 28—29; Д. Валиев, Советско-Иранские культурные связи, Ташкент, 1965.

⁷ Միրզա-Արուղասեմ Արեֆ Ղազվինին ծնվել է 1880 թ. Ղազվինում: Վախճանվել է 1933 թ.

⁸ کلیات دیوان عارف قزوینی سیف آزاد، تهران ۱۳۳۷، ص ۶۴

Ս. Ազադ, Արեֆի դիվանի ամբողջական ժողովածու, Թեհրան, 1337, էջ 64:

Մանոթ.— չափածո թարգմանությունները հեղինակինն են:

⁹ Ս. Ազադ, նշվ. աշխ., էջ 65:

Պետք է դեն նետել շարսավն, ո՛վ լուսին, երես մի ծածկի՛ր,
Անպատիվ շեյխի խրատին երբեք ականջ մի դնի՛ր,
Արծաթե բազկով բացի՛ր երեսըդ սե ֆողի տակից,
Եվ անհոգ եղիր, պատասխան կտամ ես վատ սսողին:

Ի տարբերություն մյուս պոետների, Արեֆ Ղազվինին օժտված էր հիանալի ձայնով, երաժշտական ընդունակությամբ և իր ոտանավորները ձայնագրելով ու քաղաքից քաղաք շրջելով համերգներ էր տալիս: Կասրակության առաջ: Այսպիսով նա ավելի տպավորիչ, ավելի հմայող էր դարձնում իր բանաստեղծական խոսքի զորավոր իմաստը, որը գուցե ի վիճակի չէին անելու տասնյակ տպագրված ոտանավորներ:

Այս կապակցությամբ Արեֆն ասում էր. «Եթե ես ուրիշ ոչ մի ծառայություն էլ մատուցած չլինեմ Իրանի գրականությանն ու երաժշտությանը, պետք է ասեմ, որ ես հայրենասիրական երգեր գրեցի մի այնպիսի ժամանակ, երբ պարսիկ ժողովրդի տալը հաղարից մեկն էլ չգիտեր ի՞նչ է նշանակում հայրենիք...»¹⁰:

Արեֆ Ղազվինիի ստեղծագործությունը պետք է համարել հայրենասիրական ջերմ շնչով համակված երկեր: Պոետը հրաժարվելով սխուրաստիկ ու սնամեջ զգացումներ առաջացնող սուֆիական պոեզիայի միակողմանիությունից, կարողացավ վերափոխել ու դարձնել այն իրականության գեղարվեստական արտահայտիչը:

Եթե Ա. Ղազվինիի պոեզիայում գերիշխում էր առավելապես ազգային մոտիվը, ապա անվանի բանաստեղծ-լուսավորիչ Իրաչ Միրզայի¹¹ ստեղծագործությունները աչքի են ընկնում իրենց սոցիալական հագեցվածությամբ:

Իրար հակադրվող նորի և հնի պայքարի մեջ տաղանդավոր բանաստեղծ Իրաչ Միրզան կարողացավ կողմնորոշել իր դիրքը ու սկզբից և՛ իրավիճակը հարազատ ժողովրդին ծառայելու գործին: Իրաչ Միրզայի հրատարակած սոցիալական շարիքները մերկացնող սատիրական երկերը բացահայտում են նրա քաղաքացիական մեծ համարձակությունը:

Իրաչ Միրզան քնարերգու է: Սակայն նրա քնարերգությունը երբեք չի բխում անձնական սենտիմենտալ զգացումներից, այլ տոգորված է պոետ-քաղաքացու անկեղծ զգացմունքներով: Իր ստեղծագործություններում նա արտահայտում է մայր երկրի և ժողովրդի նկատմամբ տածած անհուն սերը, նա թափանցել է իրականության խորքը և զարմանալի պարզությամբ երևույթների քառսի մեջ տեսել ճշմարիտը և այնպիսի հստակությամբ է ներկայացրել այդ բոլորը, որ այսօր էլ ընթերցողը կարողանում է ծիծաղել, արտասվել, հիանալ ու տխրել նրա ստեղծագործությունները կարդալիս:

Իրանի կանանց ազատագրման թեման 20-ական թվականներին դառնում է պարսկական պոեզիայի առաջատար խնդիրներից մեկը: Մուսուլմանական աշխարհի կնոջ ողբերգական վիճակը հուզեց նաև պոետների հոգեկան աշխարհը:

Առաջին անհրաժեշտ նախապայմանը կանանց ազատագրման համար Իրաչ Միրզան գտնում էր շահրայի վերացման մեջ: Նրա երգիծական ոտանավորները անխնա ծաղրում են հատկապես շարսավի հետ կապված դժբախտությունները:

Աստված իմ, մինչ երբ փնած պիտ մնան քմրած այս մարդիկ,
Մինչև երբ կանայք գերի պիտ մնան այս սև շահրային:

Բողոքի այս խոսքերով է պոետը հակադրվում ֆեոդալական հետամնաց կարգերին՝ իր դեմ հրահրելով մուսուլման հոգևորականության և իշխող խավի ատելությունը: Սակայն ազատամիտ ու համարձակ բանաստեղծը տուրք չի տալիս ահաբեկումներին, նրա գրիչը դառնում է էլ ավելի խայթիչ:

Կանայք հարգանքի, պատվի են արժան,
Ոչ թե շահրայի՝ պատանքի նման,
Կարծում եմ շահրան պատեն՝ է երկաթ,
Որ կնոջն արգելի լինել անառակ:

¹⁰ مجله پیام نوین، شماره ۸ سال ۱۳۴۳—ص ۴۴

Փայամե Նովին, № 8, Թեհրան, 1343, էջ 44:

¹¹ Իրաչ Միրզան ծնվել է 1874 թ. Թավրիզում, վախճանվել է 1926 թ. Թեհրանում:

այն, որն ամենից առողջ էր ու առաջադիմական, այն, ինչ զարկ էր տալիս պոեզիայի դեմոկրատականացմանը:

Պոետի մեծագույն ծառայությունը կայանում է նրանում, որ նա համարձակ ձևով ճեղքեց արհեստականորեն ստեղծված պոետական քառապաշարի տրադիցիոն կաշկանդվածությունը և այդպիսով նոր ուղի բաց արեց գեղարվեստական արտահայտչականության համար: Իր ստեղծագործությամբ բանաստեղծը ցույց տվեց, թե ինչպիսի լայն հեռանկարներ են բացվում պարսկական պոեզիայի առաջ, եթե նա հարստանում է ժողովրդական լեզվի և բանահյուսության առատ գանձով:

Իրանական նոր պոեզիայի զարգացման գործում իր լուրջ առիթ տեղն է գրավում հոշակավոր բանաստեղծ ու հասարակական գործիչ Մալեք-օշ-Շոարայե Բահարը¹⁷: Հայրենասեր, դեմոկրատ բանաստեղծը իր գրական գործունեությունը սկսում է իրանական հեղափոխության տարիներից: Երիտասարդ բանաստեղծը քաղաքական ու տնտեսական տեղաշարժերի բովում ստեղծագործական բարձր ու դժվարին ուղի անցավ: Նա սերտորեն կապվեց իր երկրի առաջավոր դեմոկրատական ուժերի հետ և իր ողջ կուսակցական նվիրված ժողովրդի և հայրենիքի փրկության գործին:

Մ. Բահարը պատկանում է այն տաղանդավոր պոետների շարքին, որոնք հմայում են ընթերցողին ոչ միայն իրենց ստեղծագործության գաղափարական հարստությամբ, այլև գեղարվեստական կատարելությամբ:

Հեղափոխության տարիներին ազգային միասնության և ազատագրության բանաստեղծական արժարժույթները հաջորդում են միմյանց. Մեհհեդի «Թուս», Կալիլայի «Հաբլ-օլ-Մաթին» («Ամուր պարան») թերթում: 1907 թ. Բահարը ընտրվում է Մեհհեդի քաղաքի դեմոկրատական կուսակցության կոմիտեի անդամ:

Սակայն խորասանում ապրած երիտասարդական տարիներին և, կարելի է ասել, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Մ. Բահարը ուներ հակառուսական տրամադրություններ: Մինչև 1917 թ. իրոք որ «Հյուսիսի հարևանը» պոետի համար մնում էր ցարական Ռուսաստան, որը իմպերիալիստական Անգլիայի հետ մեկտեղ ամեն կերպ ուզում էր խեղդել դեմոկրատական շարժումներն Իրանում: Բնականաբար, նման երևույթի նկատմամբ Բահարը ցուցաբերում էր մեծ զգուշություն:

Բանաստեղծի այդ շրջանի ստեղծագործություններից մեկում, որտեղ նա կոչ է անում զգուշ մնալ «ղաշտային արջի և վիշապի» միսվորումից, նա ահազանգում է հայրենիքի համար սպասվելիք անխուսափելի վտանգը.

Անապատի արջն ու ծովի վիշապը ձեռք-ձեռքի տված.

Մեր նավն են տառել, մահվան անգունդի եզրին կանգնեցրել,

Այս դաժան ու շար կյանքից այս ավեր չկա փրկություն,

Հայրենիքն անա անուժ հեծում է ոսոխի ձեռքին,

Իմացիր, առանց սխառնի չկա ոչ մի փրկություն,

Զգույշ եղբայրներ, մեր հայրենիքին վտանգ է սպառնում:

Սակայն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ սովետական կառավարությունը արմատապես փոխեց ցարական Ռուսաստանի վարած քաղաքականությունը Իրանի նկատմամբ, Բահարը մեծ գոհունակությամբ ողջունեց Սովետական Միության՝ ղեպի պարսիկ ժողովուրդն ունեցած բարյացակամ վերաբերմունքը: Եթե նախկինում նա գրել էր քարիզմի դեմ հասցեագրված «Ռուսական թնդանոթ» ոտանավորը, ապա այժմ հորինում է «Թագավորի վախճանը» բանաստեղծությունը, որտեղ առաջ է քաշում այն գաղափարը, որ ժողովրդին կեղեքող մարդու վախճանը նույնն է լինելու, ինչպես եղավ ռուս Թագավորին: Ժողովրդի ցասումից ոչ ոք չի փրկվի¹⁸:

Բնորոշ է նաև պոետի «Ֆեյզե շոմալ» («Հյուսիսային բարիքը») ակնգործիկ ոտանավորը, որտեղ Մ. Բահարն իր անկեղծ ուրախությունն է արտահայտում Սովետական Միության հասցեին.

Հյուսիսից փչող անուշիկ քամուց,

Ցնծում է մարդու հոգին, պար բռնում,

Այսօր ուրախ եմ, քանի հյուսիսից

¹⁷ Մեհհեդի է 1886 թ. Մեհհեդում: Վախճանվել է 1951 թվականին: Մալեք-օշ-Շոարա տիտղոսը, որ նշանակում է «պոետների թագավոր», նա ժառանգել է իր բանաստեղծ հորից Մոզաֆար էդդին Թագավորի օրոք:

¹⁸ Մ. Մ. Շապուհամեդով, Бахар и Советский Союз, История филологии, Ташкент, 1966, стр. 183.

Մեղմիկ ու մեհույշ հովիկ է վազում...

Ես չեմ քաֆցնում՝ ինչպիսի բարիք
Մեր կողմն է գալիս, հյուսիսն է տալիս...

Մ. Բաճարը սկսած 20-ական թվականներից մեկընդմիջտ ազատվում է որոշ հոգեմեծական տրամադրություններից և լիցքավորվում է հայրենիքի ազատության համար պայքարի անշեղ կրթով:

Ողևորված Հոկտեմբերյան հեղափոխության փառապանծ հաղթանակով և տեսնելով հարազատ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները, Մ. Բաճարը մեծ խանդավառությամբ ստեղծեց բարձրարժեք գործեր, որոնց մեջ զնահատում էր ժողովրդի կյանքում այն, ինչը բարձր է, ազատ, առաջադեմ և լուսավոր: Մի կողմից ջերմ սերը դեպի հայրենիքը, մյուս կողմից՝ խորը ատելությունը հայրենիքի ազատությունը խեղդող ուժերի նկատմամբ, բանաստեղծի ստեղծագործությանը տալիս են նոր ավյուն, բարձրացնելով նրա գեղարվեստական արժեքն ու գաղափարական բովանդակությունը: Բանաստեղծի համար ազատությունը ամենաթանկագին իրենցն է կյանքում՝

Ով ազատություն, վեհ ազատություն,
Ես միշտ կձգտեմ տիրանալու քեզ:

Բաճարը կոչ է անում անխնա պայքարել Իրանի հետադիմական ուժերի դեմ, շուտափառվել ժամանակավոր անհաջողություններից, սլահպանել մարտական ոգին և հավատալ լուսավոր ապագայի գալուստին:

Թող լուսեղ սրտերը մեր ջանքերի
Ահեղ պայքարի զարկերով ապրեն:
Գիտեմ գալերից կմախքեն իսպառ,
Մեր սուրբ տաճարը՝ հայրենիքը փաղցր:
Այն դժբախտ օրը, երբ իր մուր կրճից,
Չի գտնի մսնուկն, ոչ մի կաթիլ կար,
Այդ օրը մեկտեղ ծերուկ, երեխա
Կելենն պայքարի՝ դռններով ալ:

Մ. Բաճարի ստեղծագործությունները բազմաթիվ են: Հիշենք «Մահ կամ վերածնություն» սեփաբանի արյունը», «Թեհրան», «Սվինի ծայրը» և շատ ուրիշ գաղելներ ու պոեմներ:

Մ. Բաճարը համարվում է Իրանի ազգային ամենամեծ պոետներից մեկը: Նա հարազատ մնաց պարսկական դասական պոեզիայի ձևի տրադիցիաներին, երբեմն միայն նորաձևություն մտցնելով տաշաշափության մեջ:

Շնորհիվ բարձրարվեստ ստեղծագործությունների՝ Բաճարը կարողացավ հասնել իր դարաշրջանի առաջավոր գաղափարների աստիճանին:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո նա միշտ էլ բարեկամ մնաց Սովետական Միությանը: 40-ական թվականներից սկսած նա ակտիվ կերպով մասնակցում էր սովետա-իրանական կուլտուրական կազմակերպության նախաձեռնություններին¹⁹:

Հայրենասիրական մեծ սլաթոսով են տողորված երիտասարդ բանաստեղծ Միրզադե էշդիի ստեղծագործությունները²⁰:

Կանգնած լինելով քաղաքական իրադարձությունների կենտրոնում՝ էշդին ժամանակակից առաջադեմ մյուս պոետների (Իրաջ Միրզա, Արեֆ Ղազվինի, Մալեք-օշ-Շոարայի Բաճար և այլն) հետ մեկտեղ իր ստեղծագործությամբ արձագանքեց ժողովրդի առաջադիմական տրամադրություններին, նոր աշատ կյանք ստեղծելու նրանց վսեմ ձգտումներին:

Պոետի ուշադրության կենտրոնը հանդիսանում է իշխանության զլուխ անցած մակարույծների դեմ համառ պայքարը:

Մ. էշդին իր ժամանակակիցներից տարբերվում է համարձակ խառնվածքով ու հեղափոխական մտքի անզուսպ արտահայտչականությամբ:

¹⁹ Տե՛ս մանրամասն Բ. Ն. Заходер. Краткие сообщения института востоковедения, № XXXVI, Иранский сборник, М., 1959, стр. 3.

²⁰ Միրզադե էշդին ծնվել է 1893 թ. Համադան քաղաքում: 1924 թ. նա սպանվում է բռնապետական իշխանության գործակալների կողմից:

Ոչ թե համբերել, այլ ուղղակի պայքարի դուրս դալ բռնապետների դեմ, արյուն թափել ու պաշտպանել ժողովրդի օրինական իրավունքները:

Հայրենասեր բանաստեղծի մի շարք կրթող պոեմները՝ «Բողոք անդլո-իրանական պայմանագրի դեմ», «Հանուն հայրենիքի սիրուն», «Բանվորների նոր տարվա տոներ» հանդիսանում են ժողովրդի թշնամիների բացահայտ մարտահրավերներ:

1919 թ. էշդին բանտարկվում է. հուշտանգումներն ու հալածանքները մազաշափ անգամ չեն ընկճում պոետին: «Պոետը բանտում» հրկը, որը նրա ամենահույզիչ և ներշնչող երկերից է, նույնպես գրված է բանտում: Այստեղ արտահայտված է պոետի ամբողջական ներաշխարհը: Հայրենիքի ծանր ու անմխիթար վիճակը, երկիրը օտարերկրացիների վանառողների դեմ բորբոքված ցասումը, էշդինի ստեղծագործական ոգին պայծառ է: Նրան մխիթարում է իր ժողովրդի լուսավորապաշտը:

Սիրտ իմ մի տխրիւ, Եղիւ դու տոկուն,
Թուլամուրք լինել ամուր է մարդուն,
Ձէ որ խավարին հաշուդելու Լ լուս,
Ու մենք պատուելով խավարն անհուս,
Կտեսնենք շուտով պայծառ արշալույս...²¹

Պատահական չէ, որ պոետը «խավարը» պատուելու միտքը վարդացնելով՝ իր մի շարք այլ գործերում հաղորդակից է դարձնում ընթերցողին նրա բուն իմաստի հետ:

Հայրենիքի փրկությունը արյուն է պահանջում, այլապես նա միշտ էլ խաղալիք կմնա օտարերկրացիների ու ներքին բռնակալների ձեռքում:

Նորը ստեղծելու համար անհրաժեշտ է հինը կործանել:

Այս հին պալատը ավերել է պետի,
Արյունով է պետի ներկել փաղափ²²:

«Արյան տոն», «Կարմիր լուսաբաց» և այլ պոեմներում Մ. էշդին գրում է.

Այս երկրի դեկը կործանել է պետի և ուրիշ ոչինչ,
Փրկության համար արյուն տալ է պետի և ուրիշ ոչինչ,
Սեր ազատության ծառն այսօրվա ցիտցիւ, որ պիտի
Մեր արյունիցը ջուր խմի, սնվի և ուրիշ ոչինչ...²³

Մ. էշդինի ստեղծագործության ներգործման կարողությունը նրա լավագույն առանձնահատկություններից մեկն է: Պոետի լեզուն հարուստ է, համեմատությունները պատկերավոր են, դիպուկ ու հմայող:

Իր ստեղծագործական կարճատև, բայց բեղմնավոր կյանքում, էշդին բացի հայրենասիրական մոտիվներից անտարբեր չմնաց նաև երկրում տիրող սոցիալական հարցերի նկատմամբ: Կանանց իրավազրկության, շահագործվող գյուղացիության և շատ ուրիշ հասարակական ցավոտ խնդիրները միշտ էլ մնացին բանաստեղծի ուշադրության կենտրոնում: «Իրանի թագավորների հարությունը», «Սև պատանք», «Իդեալ» պոեմները, ինչպես գրականագետ Ալի Աբբար Սալիմին է գրում, «...որպես լուսավոր աստղեր միշտ էլ փայլուն կմնան պարսկական գրականության երկնակամարում»²⁴:

Մ. էշդին ևս իր ժամանակակիցների հետ մեկտեղ պարսկական պոեզիային տալով նոր բովանդակություն և ձև, հեռացնում է նրան անհատական սուբյեկտիվ զգացողությունների աշխարհից՝ դարձնելով XX դարի առաջին քառորդում ապրող իր ժողովրդի հոգու երգը, նրա հերոսական կամքի արտահայտությունը: Հենց այդ պատճառով նրա ստեղծագործությունները մինչև այսօր էլ չեն կորցրել իրենց ազգային և սոցիալական հնչողությունը:

²¹ علی اکبر سلیمی، کلیات مصور عشقی، تهران ۱۳۲۴، ص ۳۵۵

Ա. Սալիմին, էշդինի ամբողջական երկերը, Թեհրան, 1324, էջ 355:

²² Ալի Աբբար Սալիմին, նշվ. աշխ., էջ 335:

²³ Նույն տեղում, էջ 335:

²⁴ Ալի Աբբար Սալիմին, էշդինի ամբողջական երկերը, Թեհրան, 1950 թ. էջ 27:

1905—1911 թթ. իրանական հեղափոխությունը իր լնդերից ելած նոր երգիչների հետ մեկտեղ ծնում է և Ֆարրուխի Յազդին ու նետում է քաղաքական կյանքի ոլորտը ստեղծագործական նոր որոնումներ կատարելու²⁵։ Գասակարգային սուր հակամարտությունների բովում կոփվում է պատանի բանաստեղծը։ Նրա աշխարհայացքի վրա զգալի ազդեցություն է թողնում նաև ռուսական առաջին հեղափոխությունը, որից հետո պոետը իր ամբողջ էությունը նվիրվում է հեղափոխական-քաղաքական գործունեության։ Պարսիկ ժողովրդի ազատագրության մտահոգված Ֆարրուխին զանազան ժողովներում ու հասարակական վայրերում հանդես էր գալիս իր հրաշունչ բանաստեղծություններով, որոնց մեջ գովերգում էր հեղափոխությունը, հակադրվելով բռնակալական կառավարության հակաժողովրդական ուժերին։

20-ական թվականները հանդիսացան բանաստեղծի ստեղծագործական կյանքի ու քաղաքական ակտիվ գործունեության եռուն ժամանակաշրջանը։

Առաջին համաշխարհային պատերազմը, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և նրա ազդեցության ներքո Իրանում ծավալված ազգային-ազատագրական շարժումները (1918—1921) արմատական բեկում են առաջ բերում բանաստեղծի հասարակական-քաղաքական հայացքների ընդերքում։ Այս էտապում նրա ստեղծագործությունների ներսում իշխող հայրենասիրական մոտիվին ավելանում է զաղափսրական նոր որակ։ Ֆարրուխի պոետիան հատկանշական է դառնում հեղափոխական մտահղացումների անշեջ պաթոսով։

Այդ ժամանակամիջոցում եւ ծանոթանում է Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատություններին, նվ պատահական չէ, որ լինելով պարսիկ ժողովրդի առաջատար մտավորականներից մեկը, նա չափածո խոսքով, իր հայրենակիցներին ուղղում է նույն մտքերն արտահայտել հեղափոխության և ազատության մասին։ Ինչպես Էշդին, Ֆ. Յազդին ևս մինչև վերջին շունչը չի նահանջում գինված պայքարի տեսակետից և իր ստեղծագործության մեջ արծարծած ազատության զաղափարը միաձուլում է սոցիալական կարգերի արմատական հեղաշրջման հետ։

Ջամի ժառանգներ, դեհ, ուսի ելե՛լ։

Վերս տվե՛լ ընդմիշտ քշվառությամբ օեր։

Կուրատե՛լ շղթան գերության հենգ,

Սեփական ձեռնով փրկության հասե՛լ²⁶։

Ֆարրուխի Յազդիի ստեղծագործության մեջ զգալի տեղ է զբաղում նաև ներքին ռեակցիայի և իմպերիալիզմի դեմ ուղղված պայքարի մոտիվները։ Այս երկու գործոնները պոետը դիտում է, որպես իրարից անբաժան երկու շարիք երկրի համար։ Նա տրամաբանորեն հանգում է այն եզրակացության, որ եթե Իրանի կառավարող վերնախավը չցուցաբերի թուլամորթություն և չզավաճանի ժողովրդին, ապա իմպերիալիստական պետությունները անկարող կլինեն կամայականություններ կատարելու երկրում։ «Մեր դժբախտությունը նշում է, ոչ թե միայն օտարազգիներից,— գրում է պոետը,— ամենից առաջ մենք պետք է դաճողատվենք մեր ղեկավարներից»²⁷։

Իր կյանքի ամբողջ ընթացքում Ֆարրուխին հակադրվեց տիրապետող դասակարգի հակաժողովրդական տրամադրություններին, անողորմ քննադատեց բարձր պաշտոնյաներին, արհամարհելով իր անձնական կյանքին սպառնացող մահվան վտանգը։

Թունավորում է ինձ այս մահասվյուտ կլիման...²⁸

Ահա բանաստեղծի ատելության խոսքերը, որոնք բացահայտում են ռեզաշահյան իշխանության խեղդող մթնոլորտը, նրա ողջ էությունը։

Չպետք է անտեսել նաև մի կարևոր հանգամանք, որ եթե Ֆարրուխի առաջին ստեղծագործությունները համարյա զուրկ էին ինտերնացիոնալ գաղափարախոսությունից, ապա Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո բանաստեղծի մոտ լսկնհայտ է դառնում նրա հետաքրքրասիրությունը այլ ժողովուրդների հակառակորդի նկատմամբ։

Նա մեծ ջերմությամբ և անկեղծ վզացումներով է գրում ռուսների, ադրեբեյանցիների, չի-

²⁵ Միրզա Մուհամմեդ Ֆարրուխի Յազդին ծնվել է 1889 թ. Յազդ քաղաքում, 1939 թ. նա ամբարդորեն սպանվել է բանտում։

²⁶ حسین مکی، دیوان فرخی زدی، تهران ۱۳۲۸، ص ۱۴۷.
Հոսեյն Մաքքի, Ֆարրուխի Յազդիի դիվանը, Թեհրան, 1328 թ., էջ 147։

²⁷ Հ. Մաքքի, նշվ. աշխ., էջ 85։

²⁸ Հ. Մաքքի, նշվ. աշխ., էջ 104։

նացիների և այլ ազգերի իրավունքների, կամ նրանց զրկանքների մասին: Ֆարրոխին հատկապես մեծ հուզմունքով է խոսում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում սկսված քաղաքացիական պատերազմի, ռուս ժողովրդի սխրանքի, քաղցին ու զրկանքին դիմադրելու նրա անխորտակ կամքի մասին²⁹:

Բանաստեղծի հոգեկան աշխարհը խռովում է նաև Իրանի աշխատավորության, գյուղացիների ծանր վիճակը, կանանց իրավազրկության հարցը: Նա թանկ է գնահատում բանվորի քրտինքը:

Թե ի՞նչ կուզեմ նիշտն իմանալ,

Ողջ աշխարհն է պարտի բանվորին առդար³⁰,

Ժողովուրդ հասկացողությունը, որի մասին նա մի ժամանակ խոսում էր ընդհանրապես, աստիճանաբար կոնկրետանում, արժեքավորվում է կյանքի երևույթների նրա նոր ըմբռնումների մեջ: Նա սկսում է կոչ անել բանվորներին ու գյուղացիությանը՝ միանալ և «մանզաղով մաշկել ու մուրճով ջախջախել հարուստի գլուխը»³¹:

Իր առաջադիմական մտքերը Ֆարրոխի Յազդին արտահայտել է պարզ ու դյուրին ըմբռնելի լեզվով: Նրա երկերում հազվագյուտ կարելի է հանդիպել որևէ խրթին բառի կամ անհասկանալի դարձվածքի: Իդիոմատիկ արտահայտությունները, ժողովրդական առածներն ու ասույթները միշտ էլ յուրահատուկ գեղարվեստականություն են մտցրել նրա ստեղծագործության մեջ:

Ֆարրոխին հակառակ իր ժամանակակիցների, հավատարիմ մնաց դասական պոեզիայի տաղաչափությանը, նա իր հեղափոխական մտքերը կարողացավ հմտորեն հանգավորել պազլենբրում, ռուբայիներում (քառյակներում): Կարելի է ասել, որ Ֆարրոխին պարսկական գրականության պատմության մեջ առաջին պոետն էր, որ քաղաքական բովանդակությամբ պազլենբր գրեց: Պետք է ենթադրել, որ բանաստեղծական քառյակի և զագեի նախասիրությունը պոետի կողմից պատահական չէր: Պարսիկ ժողովրդի խողությունը դարեր շարունակ շոյել էր քառյակի երաժշտական տաղաչափությունը: Քառյակի այդ անանձնահատկությունը միշտ էլ օգնել է հասարակ ժողովրդին թափանցելու նրա մտքի, նրա բովանդակության իմաստի մեջ: Այս տրամաբանությամբ է, որ առաջնորդվել է պոետը իր ստեղծագործական ձևի ընտրությամբ, դարձնելով ռուբային սոցիալ-քաղաքական թեմատիկայի արտահայտչական գեղարվեստական ձևուն միջոց:

Ֆարրոխի կատարած սոցիալական ցայտուն օրինակ է ծառայել հետագա տարիներում ապրող պարսիկ առաջադեմ շատ գրողների ու պոետների համար, որոնք ճակատամարտի են ելել իմպերիալիզմի և երկրում տիրող ոեակցիոն ուժերի դեմ:

Այսպիսով, Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի և Իրանում ծայր առած ազգային-ազատագրական նոր շարժումների ազդեցության ներքո նոր թափ է ստանում նաև պարսկական շափածո խոսքը և սկսած 20-ական թվականներից աստիճանաբար կանգնում է ռեալիստական ուղու վրա: Գրականության վերելքի այդ նոր էտապը հասունացող բողբոջներ է թողնում գալիք սերնդի գաղափարական կայունության ու թեմատիկական որոնումների սկզբունքայնության հիմքում, որը և հուսալի նախադրյալ է հանդիսանում պարսկական պոեզիայի հետագա ծաղկման համար:

29 Նույն տեղում, էջ 115:

30 Նույն տեղում, էջ 168:

31 Հ. Մ ա ք ք ի, նշվ. գրականություն, էջ 78: